ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Աշակերտի բառապաշարի հարստացումը բանավոր և գրավոր խոսքում

Հետազոտող ուսուցիչներ՝ Ս. Վարդերեսյան, Լ. Աշուղյան, Դ. Եսայան, Մ.Մակարյան
Վանաձորի 3-րդ և 30-րդ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն...3

Աշակերտի բառապաշարի հարստացումը բանավոր և գրավոր խոսքում......5

Եզրակացություն. 18

Օգտագործված գրականության ցանկ. 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ ենք հասկանում «բառապաշարի հարստացում» ասելով։Ինչպե՞ս հարստացնել աշակերտի բառապաշարը գրավոր և բանավոր խոսքում։

Աշխատանքի նպատակն է ցույց տալ աշակերտների բառապաշարի հարստացման ուղիները։

Երեխաները մինչև դպրոց ընդունվելը ՆՈՒՀ-ի կրտսեր, միջին ու ավագ խմբերում բանավոր խոսքի, էքսկուրսիաների, նկարներ դիտելու, խաղերի, լսած պատմվածքների, նկարչության ու ծեփի միջոցով սովորում են մայրենի լեզուն, ճշտում են մինչ այդ սովորածբառերի բառիմաստը և իրենց բառապաշարը համալրում են նոր բառերով ու հասկացություններով։ Սակայն երեխաների սովորած բազմաթիվ բառեր ու դարձվածքներ մնում են պասիվ վիճակում, որովհետև երեխաները դեռևս ի վիճակի չեն ըմբռնելու դրանց ներքին էությունը։Երեխաները դպրոց են գալիս խոսելու, պատմելու, արտասանելու, իրենց տեսածը, լսածը, խոհերն ու զգացումները լեզվով արտահայտելու որոշակի կարողություններով ու հմտություններով, որոնք զգալի դեր են խաղում նրանց հետագա առաջընթացի ու մտավոր զարգացման գործում։ Հատկապես տարրական դասարաններում աշակերտի խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներն իրականացնելիս հիմնական շեշտը դրվում է բանավոր խոսքի կառուցման վրա, քանի որ երեխայի մոտ դեռևս բացակայում է կամ շատ թույլ է գրելու կարողությունը։

Բանավոր խոսքի զարգացման համար կարևոր նշանակություն ունի բառապաշարի հարստացումը, քանի որ օբյեկտիվ իրականության առարկաներն ու երևույթները մեր գիտակցության սեփականությունն են դառնում բառերի միջոցով ։ Մարդն իր գործունեության ընթացքում ճանաչում է շրջապատի առարկաներն ու երևույթները և իր գիտակցության մեջ կազմում այդ առարկաների ու երևույթների ընդհանուր հասկացությունները, որոնք արտահայտվում են բառերով։

Բառապաշարը խոսքի ուղնուծուծն է, նրա սնունդը, էությունը, շինանյութը։ Ուստի առանց բառապաշարի խոսքի մյուս բաղադրիչները ուղղակի չեն կարող աշխատել։

Բառապաշարի հարստացման երեք հիմնական օջախներն են ընտանիքը, հասարակական միջավայրը և դպրոցը։ Առաջին երկուսը կարելի է համարել խոսքային

բնական միջավայր, երրորդը՝ արհեստական:Մինչև դպրոց ընդունվելը երեխաներն առօրյա գործունեության և այլ բնույթի բառեր են սովորում ընտանիքում և հասարակական միջավայրում:Այս տարիքում

երեխաները գիտեն իրենց մարմնի զանազան մասերի անունները, խոհանոցին, մանկապարտեզի շենքին, ընտանիքին, փողոցի երթևեկությանը, տարվա չորս եղանակներին վերաբերող շատ բառեր ու դարձվածքներ:

Բառապաշարի այս երկու օջախներն անվերահսկելի ու անկազմակերպ են, մինչդեռ դպրոցը պետականորեն կազմավորված կրթավայր է, ուր պլանավորված եղանակով մշակվում ու վերահսկվում է երեխաների խոսքը, որը պետք է լինի մաքուր, ճիշտ, պարզ,կապակցված, բովանդակալից և արտահայտիչ:

Խոսքը պետք է զերծ լինի օտար ու բարբառային տարրերից, լեզվական անընդունելի ձևերից ու արտահայտություններից, հակառակ դեպքում բանավոր խոսքի սխալները փոխանցվում են նաև գրավոր խոսքին՝ ստեղծելով նոր դժվարություններ: Խոսքի մեջ յուրաքանչյուր բառ պետք է գործածվի ճիշտ ձևով և իր տեղում՝ պահպանելով բառակապակցման, համաձայնության, շարադասության, ուղղագրության և ուղղախոսության նորմաները:

Խոսքի ներգործուն ուժը նրա պարզությունը, մատչելիությունն է ունկնդրի կամ ընթերցողի համար: Կարևոր է նաև մտքերի տրամաբանական կապի ու հաջորդականության պահպանումը, արտահայտչականությունը, ինչին նպաստում են խոսողի ձայնի ելևէջումները, դիմախաղերը և այլ շարժումներ: Խոսքային գործունեության մեջ կարևոր դեր ունի նաև հաղորդակցական ոճը(խոսակցական, գիտական,գործնական, հրապարակային, գեղարվես-տական):

Թվարկված հատկանիշները սերտորեն փոխշաղկապված են, և ուսումնական գործընթացում դրանց ուսուցումն իրականացվում է համաձույլ[1]:

Այսպիսով,եզրակացնում ենք,որ մարդու գրագիտության աստիճանը մեծ մասամբ չափվում է նրա գրավոր կամ բանավոր խոսքով: Խոսքի երեք հիմնական բաղադրամասերն են բառապաշարը, քերականությունը և խոսք կառուցելու կարողությունը: Հայոց լեզվի ուսուցչի առաջնային խնդիրն է աշակերտների

[1] Տե՛ս Պ. Խաչատրյան,Հայոց լեզվի տարրական դասընթացի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2004, էջ 118-123:

բառապաշարի հարստացումը: Այս խնդիրն իրականացնելիս կարևորվում է ուսուցչի խոսքը, բնավորության արտաքին գծերը, գիտելիքների պաշարը, աշխատասիրությունը, քանի որ վերջինս աշակերտների համար ընդօրինակման աղբյուր է: Ուսուցչի խոսքը պետք է լինի անսխալ, համոզիչ, պատկերավոր ու գեղեցիկ:

ԱՇԱԿԵՐՏԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ ԲԱՆԱՎՈՐ և ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔՈՒՄ

Բառապաշարի հարստացման խնդիրը տարբեր դասարաններում տարբեր եղանակներով ու ձևերով է իրականացվում:Ուսուցչի կողմից կիրառվում են զանազան մեթոդներ: Տարրական դասարաններում հիմնականում զննական մեթոդներն են կիրառվում: Կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացման, խոսքի զարգացման նպատակով օգտագործվում են թեմատիկ նկարները, կատարվում է նկար-բառերի, նկար-նախադասությունների, նկար-պատմությունների իմաստի և բովանդակության վերարտադրում: Օրինակ՝ այբբենարանում զետեղված §Տարվա եղանակները¦ նկարը վերարտադրելիս աշակերտները, բնութագրելով տարվա յուրաքանչյուր եղանակ, սովորեցին զարդարվել, բողբոջ, թռչունի բույն, նորոգել,երամ, վերադարձ, զով, տաքանալ, թիթեռ, թռվռալ, զվարթ,տոթ, արևավառ, մրգեր ոսկեզօծ, ամպամած երկինք, պաղ օդ, դեղնազօծ, բուք, չվել, ցրտաշունչ, սավան, հանդարտ թափվել, ձյան ճերմակ փաթիլներ, խստաշունչ ձմեռ և այլ բնույթի բառերի ու բառակապակցությունների ուղղագրությունն ու իմաստները:

Պետք է նշել, որ նկարները վերարտադրելիս ոչ միայն աշակերտի բառապաշարն է հարստանում, այլև զարգանում է նրա դիտողականությունը, ձեռք է բերում դեպքերի հաջորդականությունը, մանրամասները տեսնելու, ընկալելու և վերարտադրելու կարողություն:

Կարևորվում է երեխաներին շատ խոսեցնելը, տեսածի, լսածի, կարդացածի մասին հարցնելը, լեզվառճական սխալները ճշտելը, երեխաների խոսքը օտար, բարբառային և խառնալեզվային բառերից ու արտահայտություններից մաքրելը:

Բառակազմության միջոցով աշակերտի բառապաշարի հարստացման աշխատանքները լայն թափ են ստանում 3-4-րդ դասարաններում, քանի որ 1-2-րդ դասարաններում աշակերտի տարիքային առանձնահատկություններից ելնելով՝ բառի կազմության մասին գործնական ընդհանուր նախագիտելիքներ են հաղորդվում և հնարավոր չէ երեխաներին սովորեցնել բառի կազմության շատ ձևեր: Ուստի 3-4-րդ դասարաններում սկզբնական շրջանում պետք է կրկնել նախորդ դասարաններում ստացած գիտելիքները և հետո նոր հենվելով դրանց վրա՝ աշակերտներին սովորեցնել

հայերենի բառակազմության օրենքները և այդ միջոցով հարստացնել նրանց բառապաշարը[2]:

Այդ նպատակով կարելի է առաջադրել զանազան վարժություններ:

Առաջադրանք 1

Գրատախտակին գրվում են հող, մայր, հայր, դեղ, ընկեր, գիր, դաս, ճաշ, դպրոց, ծաղիկ, ձուկ բառերը և պահանջվում է այլ արմատների հետ կազմել նոր բառեր: Այսպես՝

Հող- հողագործ, հողագունդ, հողածածկ, հողաչափ, սևահող, կավահող

Մայր- կնքամայր, մորաքույր, մորեղբայր, տիրամայր, մայրակաթ

Հայր- հորեղբայր, հորաքույր, վանահայր

Դեղ- դեատուն, դեղահաբ, դեղաբույս, դեղատոմս

Ընկեր- դասընկեր, գործընկեր, խաղընկեր

Գիր- ամսագիր, լրագիր, հեռագիր, ծածկագիր

Դաս- դասացուցակ, դասասենյակ

Ճաշ- ճաշասենյակ

Դպրոց- դպրոցամերձ

Ծաղիկ- արևածաղիկ, ձնծաղիկ, ծաղկաթերթ

Ձուկ- օձաձուկ, շնաձուկ, գայլաձուկ:

Առաջադրանք 2

Գրատախտակին գրվում են ընկեր, հայր, երգ, դեղձ, ճաշ, քար, քաջ, ձուկ, բառերը և պահանջվում է կազմել ածանցավոր բառեր: Այսպես՝

Ընկեր- ընկերական, ընկերություն

Հայր- հայրաբար, հայրական

Երգ- երգիչ, երգչուհի

Ճաշ- ճաշարան

Քար- քարոտ, քարեղեն

Քաջ- քաջություն, քաջաբար

Ձուկ- ձկնիկ:

Առաջադրանք 3

Գրատախտակին ուսուցիչը նկարում է արևներ , որոնց շրջանները

[2] Հ. Մխիթարյան, Բառապաշարի հարստացումը1-4-րդ դասարաններում, Երևան 1960, էջ 154-155:

գիր և տուն բառերն են և պահանջում է դրանց ճառագայթներում գրել նորանոր նույնարմատ բառեր: Այսպես՝





Առաջադրանք 4

Գրատախտակին գրվում են մութ, բարձր, երգ, ծաղիկ, դաստիարակ, քայլ, թռչուն, մեծ, գիր, ճաշ, սոսափ, կատակ, առողջ, կանաչ, դող, ծույլ, մաքուր բառերը և պահանջվում է այս զոյականներից ու ածականներից կերտել բայեր: Այսպես՝

Մութ- մթնել

Բարձր- բարձրանալ

Երգ- երգել

Ծաղիկ- ծաղկել

Դաստիարակ- դաստիարակել

Քայլ- քայլել

Թռչուն- թռչել

Մեծ-մեծանալ

Գիր- գրել

Ճաշ- ճաշել

Սոսափ- սոսափել

Կատակ- կատակել

Առողջ- առողջանալ

Կանաչ- կանաչել

Դող- դողալ

Ծույլ- ծուլանալ

Մաքուր- մաքրել:

Առաջադրանք 5

Գրատախտակին գրվում են մեկից մինչև տասը քանակական թվականները և պահանջվում է կազմել դրանց դասականները: Այսպես՝

Մեկ-առաջին

Երկու- երկրորդ

Երեք- երրորդ

Չորս- չորրորդ

Հինգ- հինգերորդ

Վեց- վեցերորդ

Յոթ- յոթերորդ

Ութ- ութերորդ

Ինը- իններորդ

Տասը-տասներորդ։

Առաջադրանք 6

Ի՞նչ է նշանակում «այցելու» բառը՝

Անծանոթ

Հաճախորդ

Խոհարար

Ճանապարհորդ։

Առաջադրանք 7

Ի՞նչ է նշանակում «արարել» բառը՝

Փայփայել

Ճառագայթել

Ստեղծել

Գրավել։

Առաջադրանք 8

Վերականգնել բառերը՝

Տա րե դա սեր

Հայ ղան նա վոր։

Առաջադրանք 9

Բոլոր տառերով կազմել բառեր՝

Ական+գրություն=

Նյութ+նկար+չու=

Երաշտ+ուժ+թույն=։

Ուսուցիչը կարող է առաջադրել նմանատիպ բազմաթիվ վարժություններ։

Բառապաշարի հարստացման և ճշգրտման ուղղությամբ տարվող աշխատանքների մեջ են մտնում նաև հոմանիշների և հականիշների յուրացման հետ կապված տարաբնույթ վարժությունները՝

- Ընթերցվող բնագրում դրանց հայտնաբերում
- Նախադասության մեջ օգտագործում
- Հականիշների և հոմանիշների զույգերի կազմում
- Տվյալ բառի հոմանիշների ընտրություն և նրբերանգների բացատրում
- Նախադասության ամբողջացում հականիշներով և այլն։

Օրինակ՝գտնել հոմանիշների զույգերը.

Գագաթ,հովիկ,վճիտ,մազ,արի,մանր,սպիտակ,զեփյուռ,կատար,խիզախ,վարս,փոքր,մաքուր,ճերմակ։

Անծանոթ բառերի բացատրությունը բառարանի հանրագիտարանի հոդվածների և այլնի միջոցով ոչ միայն հարստացնում է աշակերտի բառապաշարը, այլ նաև ձևավորում է ինքնուրույն աշխատելու կարողություն։Օրինակ՝բացատրել բառերը՝

Վիրապ-խոր փոս,գետնի մեջ փորված բանտ,

Բյուր-տասը հազար,անթիվ,անչափ,շատ,

Դաշն-երկուսի միջև կնքված պայման,համաձայնություն,

Բերկրանք-ուրախություն,հրճվանք,ցնծություն։

Դարձվածքների և ասացվածքների ուսուցումը ևս խոսքի հարստացման հիանալի միջոց է։ Դասագրքերում զետեղված գեղարվեստական ստեղծագործությունների, ժողովրդական բանահյուսության շուրջ զրույցներ անցկացնելիս անհրաժեշտ է աշակերտների ուշադրությունը հրավիրել դարձվածքներով հարուստ խոսքի արտահայտչականության վրա և խրախուսել նրանց կողմից դարձվածքների օգտագործումը։ Ասացվածքները մայրենիի դասագրքում սովորաբար հանդիպում են ընթերցանության համար նախատեսված նյութերից հետո՝ կապված ստեղծագործության բովանդակության, գաղափարի և ենթատեքստի հետ՝ դառնալով բնագրի յուրատեսակ, հակիրճ ամփոփում։ Աշակերտները պետք է ոչ միայն անգիր սովորեն ասացվածքները, այլև անհրաժեշտության դեպքում կարողանան տեղին

օգտագործել, կապել իրենց կյանքում տեղի ունեցող իրադարձությունների հետ: Օրինակ՝ վերականգնել դարձվածքները՝

քիթը	տալ
ոտքերն	մեկ լինել
սիրտ	կախել
աշխարհով	ընկնել:

Խրախուսելի է նաև աշակերտների կողմից բառատետրեր պահելն ու դրանցից օգտվելը: Յուրաքանչյուր աշակերտ պետք է ունենա բառատետր և խնամքով գրանցի միայն գրական բառեր: Բառատետրում բառերի գրանցման այբբենական կարգը կարևոր պայման է, որպեսզի աշակերտը հետագայում որևէ բառ փնտրելիս չդժվարանա: Աշակերտը չպետք է կառչի բառատետրից, այլ նրա մեջ պետք է «կյանքի կոչվեն» բառատետրի «անշունչ» բառերը[3]:

Աշակերտի բառապաշարի հարստցման մեթոդական հնարներից մեկն էլ դասասենյակում բառարկղ պահելն է: Աշակերտներն այս դեպքում թղթերի վրա գրում են իրենց համար անհասկանալի, անծանոթ ու դժվարամարս բառերը և գցում արկղի մեջ: Արկղը լցվելու դեպքում ուսուցիչը բացում է այն և աշակերտներին հանգամանորեն բացատրում է յուրաքանչյուր բառը: Այս նորությունը աշակերտների մեջ հետաքրքրություն է առաջացնում դեպի բառապաշարը:

Նրանց միջև ծավալվում է ակտիվ մրցակցություն, և ուսուցչի հետևողական աշխատանքի պարագայում այս հնարը կարող է առավել արդյունավետ լինել[4]:

Հարկ է նշել, որ բառապաշարի հարստացման խնդիրն իր լուծումը պահանջում է ոչ միայն մայրենիի դասընթացի շրջանակներում, այլև մյուս առարկաների (կերպարվեստ, ֆիզկուլտուրա, տեխնոլոգիա, մաթեմատիկա և այլն): Վերը նշված առարկաների ուսուցման ժամանակ աշակերտի ձեռք բերած բառերը միգուցե լինեն խիստ առարկայական և չմտնեն ակտիվ բառապաշարի կազմի մեջ, սակայն պասիվ բառապաշար, այնուամենայնիվ, պիտի մուտք գործեն:

---

[3] Տե՛ս Պ. Խաչատրյան,հայոց լեզվի տարրական դասընթացի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2004, էջ130-131:

[4] Տես Պ. Խաչատրյան,հայոց լեզվի տարրական դասընթացի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2004, էջ127-128:

Աշակերտի բառապաշարի հարստացման հարցում կարևորվում են նաև դպրոցական պատի թերթերի կազմումը, թատրոնը, կինոն, հեռուստացույցը, ռադիոն և այլն:

Տարրական դասարանների մայրենի առարկայի ծրագրի հիմնական նպատակներից մեկն էլ աշակերտների մեջ անսխալ գրելու և մտքերը գրագետ, հակիրճ, մտածված արտահայտելու հմտության մշակումն է:

Գրավոր խոսքի ուսուցման ոլորտում տարրական դպրոցի աշակերտների առջև դրվում են բավական բարդ խնդիրներ, ներառյալ աշակերտի բառապաշարի հարստացման խնդիրը:

Աշակերտների բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունների ձևավորման և զարգացման նպատակով օգտագործվում են գրավոր աշխատանքի չորս հիմնական տեսակներն իրենց տարատեսակներով, որոնք են՝ արտագրություն՝ ընդօրինակման և ստեղծագործական, թելադրություն՝ սովորական(հնչյունային, նախազգուշականև համր կամ ինքնաթելադրություն) և ստեղծագործական(ընտրովի, ազատ, հորինողական և առարկայական), փոխադրություն՝ բնագրին հարազատ կամ մանրամասն, համառոտ, ընտրովի, ստեղծագործական և շարադրություն՝վերարտադրողական, ինքնուրույն կամ ստեղծագործական, գործնական[5]:

Բառապաշարի հարստացմանը մեծապես նպաստում են լրացուցիչ առաջադրանքներով արտագրությունները: Այսպես՝

Արտագրել բնագիրը, կետերի փոխարեն գրել համապատասխան տառեր կամ բառեր

- Արտագրել բնագիրը՝ ընդգծելով առարկա ցույց տվող բառերը
- Արտագրել բնագիրը՝ առարկա ցույց տվող բառերի վրա համապատասխան հատկանիշներ ավելացնելով և այլն:

Այս առաջադրանքներով արտագրությունները համապատասխան բարդությամբ կարելի է հանձնարարել 1-4-րդ դասարաններում[5]:

Բառապաշարի զարգացմանը մեծապես նպաստում են դիտողական, բացատրական և ազատ թելադրությունները:

[5] Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2006, էջ 296-312:

Դիտողական թելադրության դեպքում աշակերտները փորձում են տեսողական հիշողությամբ մտապահել դժվար գրություն ունեցող և նորածանոթ բառերը, ապա՝ ինքնուրույն գրել;

Բացատրական թելադրության դեպքում ուսուցիչը բացատրում է անծանոթ բառերը, ապա թելադրում բնագիրը:

Ազատ թելադրության ժամանակ ուսուցիչը բնագիրը առաջին անգամ կարդալուց հետո գրատախտակին գրում և բացատրում է անծանոթ բառերը, ապա աշակերտներին զգուշացնում, որ յուրաքանչյուր նախադասություն թելադրելու է միայն մեկ անգամ: Եթե աշակերտը չի կարողանում նույնությամբ մտապահել ուսուցչի կարդացածը, գործածում է սեփական բառեր՝ պահպանելով նախադասության արտահայտած միտքը: Թելադրության այս տեսակը հիշողության զարգացմանը զուգահեռ նպաստում է նաև խոսք կառուցելու կարողությունների ձևավորմանը, հող ստեղծում հետագայում փոխադրություն գրելու համար[6]:

Աշակերտի բառապաշարի հարստացման գործում կարևորվում է նաև բառ-թելադրության դերը: Աշակերտներին տրվում է 5-10 բառ, որպեսզի բացատրեն դրանց իմաստը, ուղղագրությունը և կազմեն նախադասություններ: Ուսուցիչը կարդում է բնագիրը, հարցնում է բառերի իմաստը, անծանոթ բառերը ինքն է բացատրում, գրել է տալիս գրատախտակին, դրանցով նախադասություններ կազմել տալիս, ապա մաքրում է գրատախտակը և թելադրում՝ պահանջելով, որ յուրաքանչյուր բառ գրեն նոր տողից: Բոլոր բառերը գրելուց հետո աշակերտների միջոցով մեկ առ մեկ բացատրվում է նրանց իմաստը, կազմությունը, տրվում են դրանց հոմանիշները:Արդյունավետ է նոր սովորած բառերով ստեղծագործական թելադրության բնագրեր կազմելը և թելադրելը: Այսպես՝ 3-րդ դասարանում Ս. Օրբելյանի «Մայր ծիծեռնակը» անցնելիս աշակերտները ծանոթացան դասի հենակետային, անծանոթ և դժվար ուղղագրություն ունեցող բառերին: Այս դեպքում կարելի է աշակերտներին առաջադրել բույն, առաստաղ, ծլվլոց, հարավ, կարգի բերել, բերկրանք, ձագ, ամբողջ, ուրախ-ուրախ, թռչուն, օձ, աղմուկ-աղաղակ, նենգ, կոկորդ, ակնթարթ, խեղճ, խեղդամահ, հետզհետե բառերը և պահանջել, որպեսզի երեխաները հորինեն մեկ այլ բնագիր և այնուհետև թելադրել:

[6] Ժ. Ե. Կոնդակչյան, Մեկ-յոթ տարեկան երեխաների բառապաշարը, Երևան . 1981, էջ 16

Աշակերտի գործուն բառապաշարի հարստացմանն օգնում են ազատ ստեղծագործական շարադրությունները, երբ ուսուցիչը աշակերտին նախօրոք տալիս է թեմատիկ նորանծանոթ բառեր, նաև թևավոր արտահայտություններ, դարձվածքներ ու պատկերավորման միջոցներ: Այս աշխատանքը նպատակ է հետապնդում աշակերտներին զինել հարուստ բառապաշարով և հմտացնել նրան այդ բառամթերքի գործածության մեջ:Այսպես՝ աշակերտներին առաջադրում ենք « Բերքահավաք» թեմային վերաբերող բառեր, բառակապակցություններ (աշնանային եռուզեռ, դեղձենի, սալորենի, բերրի, անձրև, բեռնաթափ, օգնել, առատ բերք, հրճվանք, գյուղացի, փարթամ, խաղողի ողկույզներ, սեխ, քաղցրությունից ճաքել, այգեգործ, արևահամ, այգեկութ, որթ, ամռան փուշը ձմռան նուշն է և այլն) ու լեզվառճական հնարքներ և պահանջում ենք, որպեսզի աշակերտը, ընտրություն կատարելով վերոնշյալ բառերից, գրի շարադրություն:

Բառապաշարի հարստացման գործում կարևորվում են նաև նկարի շուրջ տրվող, նկարագրական, բնութագրական շարադրությունները, որոնք ստեղծագործական ինքնուրույն աշխատանք են պահանջում:

Նկարի շուրջ տրվող շարադրության դասն ունենում է այսպիսի բաղադրամասեր՝ նկարի դիտում, ընթերցում, վերնագրի և անունների ընտրություն, պլանի կազմում, բանավոր վերարտադրում, բովանդակության գրավոր շարադրում:Այս աշխատանքի ընթացքում միևնույն առարկաները տարբեր աշակերտների կողմից տարբեր կերպ են բնութագրվում, դիտվող նկարը յուրովի է ներկայացվում:

Նկարագրական շարադրությունները ստեղծվում են աշակերտների լսած կամ տեսած առարկաների ու երևույթների հիմքի վրա: Երբեմն ցուցադրվում է որևէ առարկա և պահանջվում է նշել անունը, գույնը, չափը, ձևը, նյութը, օգտակարությունը և այլն: Այսպիսի շարադրության ընթացքում ուսուցիչն օգնում է աշակերտներին տարբերակել նկարագրվող առարկաների հատկանիշները, կողմնորոշվել թեմայի հարցերի շուրջ:

Կարելի է շարադրության թեմա դարձնել նաև էքսկուրսիաներից, զբոսանքներից, կինոնկարների, ներկայացումների մուլտֆիլմերի դիտումներից ստացած տպավորությունները:

Բնութագրական շարադրությունը համեմատաբար ավելի բարդ է և աշակերտներից պահանջում է տրամաբանական մտածողություն, դիտողականություն, ստեղծագործելու մեծ կարողություն:Այսպիսի շարադրությունները հիմնականում հանձնարարվում են 3-րդ և ավելի բարձր դասարաններում՝ թեմաներ դարձնելով ընկերական հարաբերությունները, կենդանական աշխարհը, ինչպես նաև ընտանիքի անդամներին, հերոս ազատամարտիկներին վերաբերող հարցեր:

Մեծ է շարադրության վերլուծության դասերի դերը աշակերտի բառապաշարի հարստացման գործում:

Աշակերտի բառապաշարի հարստացմանը, հիշողության զարգացմանը, ստեղծագործական նախաձեռնության դրսևորմանը նպաստում է նաև փոխադրությունը, որի ընթացքում աշակերտները վերարտադրում են ուսուցչի կողմից ընթերցած բնագրի բովանդակությունը՝ պահպանելով

Դեպքերի և գործողությունների հաջորդականությունը:Որքան էլ, որ ունկնդրած նյութի բովանդակությունը փոխադրելիս կարևորվում է աշակերտի ինքնուրույն խոսքը, այնուամենայնիվ պետք է աշխատանք տանել, որ աշակերտը որոշ հեղինակային բառեր, արտահայտություններ, մտքեր վերարտադրի՝ հարազատ մնալով հեղինակի ոճին և լեզվին:

Բառապաշարի հարստացումը կարելի է իրականացնել խոսքի մասերի ուսուցման միջոցով:

Սովորաբար երեխայի խոսքի մեջ առաջին բառերը գոյականներն են, ինչը նշանակում է, որ երեխայի սկզբնական բառապաշարում գոյականները մյուս խոսքի մասերի համեմատությամբ մեծամասնություն են կազմում: Հետագայում գոյականին աստիճանաբար հավասարվում են գործողություն ցույց տվող բառերը՝ բայերը: Գոյականի ուսուցման ժամանակ կարելի է աշակերտի բառապաշարը հարստացնել ամանեղեն (աման, ափսե, գավաթ, թեյնիկ, ձագար և այլն), աշխատանք-մասնագիտություն (այգեգործ, բժիշկ, բեռնակիր, դերձակ, գրադարանավար, երգիչ, երաժիշտ և այլն), աշխատանքի գործիքներ (մուրճ, մանգաղ, բահ, ուրագ և այլն), բանջարեղեն (բամիա, բողկ, սխտոր, կաղամբ, սեխ և այլն), բնություն (աղբյուր, ամպրոպ, ձյուն, անձրև, մեգ, եղյամ և այլն), բույսեր (արևածաղիկ, տերև, ցողուն),

դպրոց (այբբենարան, գրադարան, մատյան, օրագիր), գրենական պիտույքներ(էջանշան, թղթապանակ, կարկին, օրացույց, համրիչ), ընտանիք(եղբայր, քույր, մորաքույր, հորեղբայր), կենդանիներ (առյուծ, ոզնի, եղջերու, գոմեշ, օձ) և այլ հավաքական գոյականների մեջ մտնող բառացանկով:

Բայի ուսուցումը տարրական դպրոցում լուրջ բարդություն է ներկայացնում, որովհետև այն ունի քերականական շատ հատկանիշներ: Նկատի ունենալով, որ բայի լեզվաբանական առանձնահատկությունների յուրացումը կրտսեր դպրոցականների համար բարդ է, տարրական դասարաններում սովորողները ծանոթանում են բայի միայն մի քանի հատկանիշներին: Բայերի ուսուցման ժամանակ գործողություն ցույց տվող տարբեր նկարների միջոցով կարելի է հարստացնել աշակերտի բառապաշարը:

Ածականները գործածվում են ավելի ուշ: Խոսքի այս մասի երևան գալն օրինաչափ է եթե ոչ բոլոր երեխաների, ապա մեծ մասի համար, քանի որ այն գիտակցելը պահանջում է մտավոր ջանքերի առավել լարում՝ բաղդատում, համեմատում: Դեռևս նախադպրոցական տարիքում երեխաներն իրենց խոսքում օգտագործում են ածականներ՝ կարողանալով ճիշտ պատասխանել առարկայի հատկանիշին վերաբերող մեծերի տված հարցերին: Աշակերտը ածականների մեծ պաշար ձեռք է բերում ընթերցած ստեղծագործությունները վերլուծելիս, հերոսների արարքները դիտարկելիս, նկարագրական պատմություններ վերարտադրելիս: Ածականներով զինվելուն մեծապես նպաստում են նաև հոմանիշ և հականիշ զույգերով աշխատելը:

Թվականը յուրահատուկ տեղ է գրավում խոսքի մասերի համակարգում թե՛ իմաստով, թե՛ կազմությամբ, թե՛ այլ խոսքի մասերի հետ ունեցած հարաբերակցությամբ:Երեխան թվականները գիտակցորեն սկսում է օգտագործել երեք տարեկանից սկսած, իսկ մինչ այդ հաշվում է մեխանիկորեն՝ մեծերին ընդօրինակելով: Երեք տարեկանից հետո երեխան կարողանում է մեկ առարկան տարբերել շատից, առարկաների ամբողջ խմբից, կոնկրետ կերպով առանձնացնել շատը և մեկը, իսկ որոշակի քանակը՝ երկու, չորս, հինգ, նա յուրացնում է ավելի ուշ՝ հինգ տարոկանից հետո[6]:

Անձնական դերանունները սկսում են երևան գալ երկու տարեկանից հետո: Սկզբում երեխան դերանունն օգտագործում է մեծերի ասածն անմիջապես ու

նույնությամբ կրկնելիս, հետո նոր միայն կարողանում է հասկանալ, որ իր անունն ու եսը միևնույն բառերն են:Նշանակալիորեն երկար է տևում երրորդ դեմքով ինքն իրեն անվանելու շրջանը, քանի որ երեխան երկար ժամանակ դեռ չի յուրացնում դերանվան իսկական իմաստը, չի գիտակցում դրա անհրաժեշտությունը: Երբեմն երեխան իրեն անվանում է դու, քանի որ նրա համար մատչելի է դառնում «դու» դերանունը, որով մեծերը դիմում են իրեն: Դերանվան երևան գալը երեխայի խոսքում գիտնականները համարում են ինքնագիտակցման, ինքն իրեն ճանաչելու նշան, ինչպես նաև իր խոսքում օգտագործած բառի իմաստը գիտակցելու վկայություն[7]:Դեռևս նախադպրոցական տարիքում երեխան իր խոսքում օգտագործում է ինչպես շաղկապներ, այնպես էլ ձայնարկություններ: Հետագայում դրանց գործածման հաճախականությունն աստիճանաբար մեծանում է՝ պայմանավորված մտածողության զարգացմամբ և դրա հետևանքով խոսքային կառույցների բարդացմամբ:

Տարրական դասարանների մայրենի լեզվի ծրագրում նախատեսված չէ խոսքի մասերի ամբողջական ուսումնասիրություն: Սակայն կրտսեր դպրոցականները պետք է տարրական գիտելիքներ ձեռք բերեն նաև ձևաբանությունից:

Ի տարբերություն խոսքի մասերի ուսուցման ավանդական հաջորդականության(գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, եղանակավորող բառեր, ձայնարկություն), լեզվական տարրական գիտելիքների ուսուցման փուլում նպատակահարմար է դրանք ուսումնասիրել հետևյալ հաջորդականությամբ՝ գոյական, բայ, ածական, մակբայ, դերանուն, շաղկապ, կապ, ձայնարկություն, թվական:

Վեց- յոթ տարեկան երեխաների բառապշարի քանակական և որակական վերլուծությունը ցույց է տվել, որ խոսքի մասերի քանակը նրանց օգտագործած բառերի ընդհանուր թվի (35617) մեջ այսպիսին է.

Գոյական-11430 բառ կամ 32,9%

Բայ- 11350 բառ կամ 31,8%

Ածական-1629 բառ կամ 4,6%

Թվական -829 բառ կամ 2,3 %

Դերանուն- 4150 բառ կամ 11,6 %:

Մնացած 16,8%-ի մեջ են մտնում շաղկապն ու ձայնարկությունը:

Բոլոր խոսքի մասերն ուսումնասիրելիս ուսուցիչն իր ուշադրության կենտրոնում պիտի պահի աշակերտների բառապաշարի հարստացման խնդիրը:

Այսպիսով,եզրակացնում ենք,որ աշակերտի բառապաշարի հարստացման աշխատանքն իրականանում է ուսուցողական բոլոր պրոցեսների ընթացքում: Ի վերջո, կարևորը ոչ միայն բառապաշարի հարստացումն է, այլև միջոցների ձեռնարկումը՝ բառերի այդ պաշարն աշակերտի սեփականությունը դարձնելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բառապաշարի զարգացումը, այսպիսով, լեզվի բառային կազմում տեղի ունեցող այն բոլոր փոփոխությունների ամբողջությունն է, որոնք ուղղված են բառային կազմի մակարդակի արդիականացմանը, նրա համապատասխանեցմանը հասարակական կեցության ու գիտակցության առավել զարգացած աստիճանին և տվյալ փուլի կառուցվածքին ու համակարգին: Տարրական դասարաններում բառապաշարի հարստացման ուղղությամբ հիմնականում աշխատանք է տարվում մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի վերլուծության ժամանակ: Աշակերտներին հանձնարարվում են բառային աշխատանքներ:

Կարևորվում են անծանոթ բառերի առանձնացումը, իմաստի բացատրումն ու իմաստավորումը, բառակազմական վերլուծությունը, որի հիման վրա և՛ բացահայտվում է անծանոթ բառի նշանակությունը, և՛ յուրացվում ուղղագրությունը:

Բառապաշարը լեզվի, այսպես ասած, ամենազգայուն բաղադրիչն է, նրա հարափոփոխ մասը, որը անմիջապես արտացոլում է հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխություններն ու տեղաշարժերը: Յուրաքանչյուր նոր առարկա կամ երևույթ, հասկացություն, գաղափար կամ հարաբերություն, որ առաջ է գալիս մարդկային հասարակության որևէ բնագավառում, քննումէ ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի զարգացման միայն մի քանի դրսևորումներ և ոչ բոլոր փոփոխություններն ու երևույթները: Ժամանակակից հայերենի մեջ պատկառելի քանակ են կազմում այն բառերը, որոնց ստեղծումը կամ ներմուծումը կապվում է գիտության, տեխնիկայի, արտադրության, մշակույթի, առհասարակ հասարակական կյանքի զարգացման հետ: Այդ ամենը հսկայական չափով հարստացրել է հայոց լեզվի բառապաշարը, որը նրա զարգացման դրսևորումներից է: Լեզվի բառային կազմը, այսպիսով, անընդհատ նորացվում է. մուտք են գործում նորակազմ կամ փոխառյալ բառեր և դուրս են մղվում կամ անգործածական դառնում հնացած բառերը, և այդ գործընթացը չի ավարտվում, այն ուղեկցում է լեզվի զարգացման ողջ ընթացքին՝ տարբեր ժամանակաշրջանում տարբեր դրսևորումներ ու տարածում ստանալով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Աբրահամյան Ս.Գ., Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969։

2.Աղայան Է., Լեզվաբանության ներածություն, Երևան 1953։

3.Ավագյան Մ., Պատկերազարդ քերականություն ,Երևան, 1997։

4.Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան ,2006։

5.Գյուլամիրյան Ջ., Թորոսյան Կ., Մայրենի 2, Հանրակրթական դպրոցի դասագիրք, Երևան, 2005։

6. Գյուլբուդաղյան Ս. Վ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1987։

7.Խաչատրյան Պ., Հայոց լեզվի տարրական դասընթացի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2004։

8.Կանեցյան Գ. Ռ., Կապակցված խոսքի զարգացումը առաջին դասարանում, Երևան, 1990։

9.Կոնդակչյան Ժ. Ե., Մեկ-յոթ տարեկան երեխաների բառապաշարը, Երևան, 1981։

10.Մխիթարյան Հ., Բառապաշարի հարստացումը 1-4-րդ դասարաններում, Երևան,1960։

11.Սուքիասյան Ա.Մ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1999։

12.Տեր-Գրիգորյան Ա., Խոսքի զարգացման մեթոդիկա, Երևան, 1974։

13.Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Այբբենարան, Երևան, 2004։